## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ԿԱՆԱՆՑ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

07.03.2025 12:37




Կանանց միջազգային օրվան ընդառաջ, ձևավորված ավանդույթի համաձայն, ՀՀ փաստաբանների պալատը Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարում է կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված միջոցառումների իրականացման մասին:

Միջոցառման շրջանակներում 2025թ. մարտի 10-ից մինչև 14-ը փաստաբանները և Փաստաբանական ակադեմիայի ունկնդիրներն անվճար իրավաբանական խորհրդատվություն կտրամադրեն կանանց:

Նախաձեռնության գլխավոր նպատակն է խթանել կանանց իրավունքների պաշտպանությունը Հայաստանում, ինչպես նաև բարձրացնել հանրային իրավագիտակցությունը և փաստաբանին դիմելու իրավական մշակույթը:

Միջոցառմանն արդեն իսկ միացել են բազմաթիվ  փաստաբաններ, ինչպես նաև Փաստաբանական ակադեմիան:

Անվճար իրավաբանական օգնությունը տրամադրվելու է ՀՀ փաստաբանների պալատի Երևան քաղաքում տեղակայված վարչական շենքում,  ինչպես նաև Երևանի այլ հասցեներում և մարզերում:

Միջոցառման հետ կապված հարցերի դեպքում կարող եք զանգահարել՝ 010-600701#111 հեռախոսահամարին:

Ստորև ներկայացվում է նախաձեռնությանը միացած փաստաբանների ցանկը.

**Բեռնել ցանկը**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })